ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի
Բերդ համայնք, գ. Բերդ Լ. Բեկի 5, հեռ. /0267/ 2-10-81
berdhamaynq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

16 ԱՊՐԻԼԻ 2014 ԹՎԱԿԱՆ N 10-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի N 49-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Իրավական ակտերի մասին,, ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ կետերով

համայնքի ավագանին որոշում է

Համայնքի ավագանու 2013 թ. դեկտեմբերի 17-ի ,,Գույքի վարձավճարների, համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների 2014 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին,, N 49-Ա որոշման հավելվածը լրացնել նոր՝ 6-րդ կետով, հետևյալ բովանդակությամբ.

6. համայնքի տարածքում առևտրի սրահների զբաղեցրած հողամասերի տարեկան վարձավճարը սահմանել 500 դրամ՝ 1 քառակուսի մետրի համար:

Համայնքի ղեկավար Հ. Մանուչարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի
Բերդ համայնք, ք. Բերդ Լ. Բեկի 5, հեռ. /0267/ 2-10-81
berdhamaynq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

16 ԱՊՐԻԼԻ 2014 ԹՎԱԿԱՆ N 11-Ա

ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՎԱՆԱՑԱՆԿՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ՈՒ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ,,Իրավական ակտերի մասին,, օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով, ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ մասով և հաշվի առնելով Բերդի քաղաքապետի առաջարկությունը

համայնքի ավագանին որոշում է

1.Քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) համայնքային ծառայության առաջատար պաշտոնների 3-րդ ենթախմբից հանել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդի քաղաքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետի պաշտոնը, ծածկագիրը՝ 2.3-4.

2) համայնքային ծառայության կրտսեր պաշտոնների 1-ին ենթախմբից հանել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդի քաղաքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետի պաշտոնը, ծածկագիրը՝3.1-3.

2.Կատարված փոփոխություններով հաստատել Բերդի քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

3.Սույն որոշման 1-ին կետն ուժի մեջ է մտնում Բերդի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կատարելու մասին իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

Համայնքի ղեկավար Հ. Մանուչարյան

Հավելված
Բերդի համայնքի ավագանու
2014 թվականի ապրիլի 16-ի
N 11-Ա որոշման

ԲԵՐԴԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 23
2.Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

Հ/Հ	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը/ՀՀդրամ/
	Համայնքի ղեկավար	1	231000
	Հայեցողական պաշտոններ		
	Համայնքի ղեկավարի տեղակալ	1	114000
	Համայնքի ղեկավարի օգնական	1	85150
	Համայնքի ղեկավարի խորհրդական	1	73585
	Համայնքային ծառայողներ		
	Աշխատակազմի քարտուղար 1.2-1	1	111700
	Ֆինանսատնտեսագիտական բաժին		
	Բաժնի պետ 2.1-2	1	102500
	Առաջատար մասնագետ 3.1-1	1	62040
	Առաջին կարգի մասնագետ 3.2-9	1	59524
	Առաջին կարգի մասնագետ 3.2-1	1	59524
	Առաջին կարգի մասնագետ 3.2-7	1	59524
	Ներքին աուդիտի բաժին		
	Բաժնի պետ 2.1-3	1	102500
	Քաղաքացիական կացության ակտերի գրանցման Բերդի տարածքային բաժին		
	Բաժնի պետ 1.3-1	1	139500
	Առաջին կարգի մասնագետ 3.2-10	1	64250
	Աշխատակազմ		
	Գլխավոր մասնագետ 2.3-2	1	96680
	Գլխավոր մասնագետ 2.3-3	1	96680
	Առաջատար մասնագետ 3.1-7	1	62040
	Առաջատար մասնագետ 3.1-6	1	62040
	Առաջին կարգի մասնագետ 3.2-3	1	59524
	Քաղաքացիական աշխատանք իրականացնողներ		
	Գնումների համակարգող	1	73585
	Տեխսպասարկման անձնակազմ		
	Վարորդ	1	73585
	Հավաքարար	2	59524
	Հանդապահ	1	59524

Աշխատակազմի քարտուղար Ա. Մաճկալյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի
Բերդ համայնք, թ. Բերդ Լ. Բեկի 5, հեռ. /0267/ 2-10-81
berdhamaynq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

16 ԱՊՐԻԼԻ 2014 ԹՎԱԿԱՆ N 12-Ա

11-002-0073-0023 ԾԱԾԿԱԳՐՈՎ 135.5 ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Պետական առաջին գրանցման ժամանակ Բերդ համայնքի սեփականությունը հանդիսացող Բերդ քաղաքի Մաշտոցի 32/32 հասցեում գտնվող 11-002-0073-0023 ծածկագրով 135.5 քմ մակերեսով հողամասը՝ քարտեզագրման ընթացքում չափագրվել և սխալմամբ հաշվառվել է՝ տերն անհայտ:

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

Համայնքի ավագանին որոշում է

Հաստատել համայնքի ղեկավարի կողմից գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունը. 11-002-0073-0023 ծածկագրով 135.5 քմ մակերեսով, Բերդ քաղաքի Մաշտոցի 32/32 հասցեում գտնվող խառը կառուցապատման հողամասը ճանաչել համայնքի սեփականությունը:

Համայնքի ղեկավար Հ. Մանուչարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի
Բերդ համայնք, ք. Բերդ Լ. Բեկի 5, հեռ. /0267/ 2-10-81
berdhamaynq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

16 ԱՊՐԻԼԻ 2014 ԹՎԱԿԱՆ N 13-Ա

0.043693 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ, 13.0 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ, 35.3 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով և հաշվի առնելով, որ նշված հողամասերն ընդգրկված չեն ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի կազմում, չեն գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չեն սահմանափակում այլ անձանց իրավունքները, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ և համայնքի ղեկավարի առաջարկությունը

համայնքի ավագանին որոշում է

1.Տալ համաձայնություն Բերդ համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականության բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասերից 0.043693 հա հողամասն աճուրդով օտարելու համար, ծածկագիրը՝ 11-002-0032-0004:

Մեկնարկային գինը սահմանել 440 000 դրամ:

2.Տալ համաձայնություն Բերդ համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականության բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասերից 13.0 քմ մակերեսով հողամասն աճուրդով օտարելու համար, ծածկագիրը՝ 11-002-0072-0001:

Մեկնարկային գինը սահմանել 130 000 դրամ:

3.Տալ համաձայնություն Բերդ համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականության բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասերից 35.3 քմ մակերեսով հողամասն աճուրդով օտարելու համար, ծածկագիրը՝ 11-002-0072-0001:

Մեկնարկային գինը սահմանել 355 000 դրամ:

Համայնքի ղեկավար Հ. Մանուչարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի
Բերդ համայնք, թ. Բերդ Լ. Բեկի 5, հեռ. /0267/ 2-10-81
berdhamaynq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

16 ԱՊՐԻԼԻ 2014 ԹՎԱԿԱՆ N 14-Ա

ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 2 ԱՌԵՎՏՐԻ ՍՐԱՀԸ ՀՈՂԱՄԱՍՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ կետով և ՀՀ կառավարության 18.05.2006 թ. N 912-Ն որոշման 35-րդ կետի գ) ենթակետով և 34-րդ կետով՝

համայնքի ավագանին որոշում է

1.Տավուշի մարզի Բերդ համայնքի սեփականությունը հանդիսացող Բերդ քաղաքի Մաշտոցի 82/6 /ութսուներկու կոտորակ վեց/ հասցեում գտնվող 7.72 /յոթ ամբողջ յոթանասուներկու հարյուրերորդական/ քմ մակերեսով արտաքին չափերով և 5.1/հինգ ամբողջ մեկ տասնորդական/ քմ մակերեսով ներքին չափերով առևտրի սրահը 76428 /յոթանասունվեց հազար չորս հարյուր քսանութ/ ՀՀ դրամով և նրա պահպանման ու սպասարկման 7.72/յոթ ամբողջ յոթանասուներկու հարյուրերորդական/ քմ մակերեսով հողամասը 6253 /վեց հազար երկու հարյուր հիսուներեք/ ՀՀ դրամ կադաստրային արժեքով ուղղակի վաճառքի ձևով օտարել Նիկոլ Բաբայանին:

2. Տավուշի մարզի Բերդ համայնքի սեփականությունը հանդիսացող Բերդ քաղաքի Մաշտոցի 90/90 /իննսուն կոտորակ իննսուն/ հասցեում գտնվող 9.3 /ինն ամբողջ երեք տասնորդական/ քմ մակերեսով արտաքին չափերով և 6.7/վեց ամբողջ յոթ տասնորդական/ քմ մակերեսով ներքին չափերով առևտրի սրահը 92070 /իննսուներկու հազար յոթանասուն/ ՀՀ դրամով և նրա պահպանման ու սպասարկման 4.65/չորս ամբողջ վաթսունհինգ/ հարյուրերորդական/ քմ մակերեսով հողամասը 3766/ երեք հազար յոթ հարյուր վաթսունվեց/ ՀՀ դրամ կադաստրային արժեքով ուղղակի վաճառքի ձևով օտարել Կամո Ռաֆիկի Գևորգյանին:

3. Օրենքով սահմանված կարգով կնքել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր:

Համայնքի ղեկավար Հ. Մանուչարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի
Բերդ համայնք, ք. Բերդ Լ. Բեկի 5, հեռ. /0267/ 2-10-81
berdhamaynq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

16 ԱՊՐԻԼԻ 2014 ԹՎԱԿԱՆ N 15-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ԳՈՒՅՔ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 605 հոդվածի 1-ին և 3-րդ կետերով՝

համայնքի ավագանին որոշում է

Բերդ համայնքի սեփականությունը հանդիսացող բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասերից Հայաստանի Հանրապետությանը նվիրաբերել 0.0431 հա հողամաս՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության ,,Բերդի արհեստագործական պետական ուսումնարան,, ՊՈԱԿ-ին կառուցապատման իրավունքով անհատույց /մշտական/ օգտագործման տրամադրելու նպատակով:

Համայնքի ղեկավար Հ. Մանուչարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի
Բերդ համայնք, գ. Բերդ Լ. Բեկի 5, հեռ. /0267/ 2-10-81
berdhamaynq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

16 ԱՊՐԻԼԻ 2014 ԹՎԱԿԱՆ N 16-Ա

,,ՑԵՆԶՈՐ,, ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՍՊԸ-ԻՆ ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածով

համայնքի ավագանին որոշում է

1. ,,Ցենզոր,, տեղեկատվական վերլուծական կենտրոն ՍՊԸ-ին համակարգչային ծառայությունների սպասարկման համար հատկացնել 180 000 /մեկ հարյուր ութսուն հազար/ դրամ՝ համայնքի վարչական բյուջեի պահուստային ֆոնդից:
2. Այդ նպատակով համայնքի վարչական բյուջեի պահուստային ֆոնդից /11.01.02.51/ 180 000 դրամ ուղղել քաղաքապետարանի պահպանման ծախսերի նախահաշվի /01.01.01.51/ ,,Համակարգչային ծառայություններ,, /4232/ հոդվածին:

Համայնքի ղեկավար Հ. Մանուչարյան